

սում աւուրն ճայթեալ ամպոց երկնից՝  
 հրայրեաց արար զնա,» եւ անոր բանակէն  
 «երեք հազար այր ի միում գիշերի սատա-  
 կեցան,»։ Վաշդեան հրայրեաց եղած էր  
 «մինչ նստէր առ դուռն քաղաքին Տամ-  
 բուրայ։ Զայս յետոյ շինեաց Համամ, զիւր  
 անուն զնկելով Համամաշէն,»։ Իբր թուական  
 կ'ըսուի թէ «ի սոյն ամի ելանէ Հերակլ, եւ  
 սպանանէ զԾոսրով,» եւն (= Ծոսրով Բ.  
 Պարուէզ)։ ուստի՝ 627/8 Յ. Թ<sup>1</sup>։ Ուրիշ  
 աւանդութիւն մը կ'ըսէ թէ Բագրատու-  
 նեաց մայրաքաղաքին Անոյ Ալփ-Արսլանէ  
 առնուելու ատեն (1064ին)՝ բազմաթիւ  
 Հայեր, նաեւ իշխանական ու թագաւորա-  
 կան տնէ, ապաստանած են Համշէնի կու-  
 սական անտառներով ձորերը, եւ երկար  
 ժամանակ շրջակայից անձանօթ ապրած։  
 Աւելի տարօրինակ է այն զրոյցը, որ զՀամ-  
 շէն արեւելեան եւ նաեւ հայ հէքեաթներ-  
 րու «մութ աշխարհը» կ'ընէ։ Այս զրոյցը  
 գրած է Հեթում, Կոռիկոսի տէրը, որ յե-  
 տոյ կրօնաւորած է լատին վանքի մը մէջ  
 (1305ին) եւ գրած լատիններէն ու գաղ-

<sup>1</sup> Հ. Միտոյեւ Վ. Չմէնց. Պատմ. Հայոց.  
 Վենետ. 1785. Հտր. Բ. 339 կը զետեղէ այս գառ-  
 մուածը 632 Յ. Թ. տարւոյն ներքեւ։